


ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԱՂՏՆԻ

Հաստատված է
«Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ լիկերության
Միակ մասնակցի կողմից լիազորված անձ՝
Ռուսլան Դեգոյարենկո
«09» սեպտեմբերի 2025



«ՖՐԻԴՈՍ ՖԻՆԱՆՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ

ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Փաստաթղթի համարը	Տարբերակի համարը	ՆԻԱ սեփականատեր	ՆԻԱ փոփոխության կարգավիճակը
24	1	Համապատասխանության բաժին	Նոր

ԵՐԵՎԱՆ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆՊԱՏԱԿ	2
2. ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ	6
3. ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ	7
4. ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐ	8
5. ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ	11
7. ԴԵՐԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	15
8. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	16
9. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ	17
10. ԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ	17
11. ԴԻՏԱՆՑՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	18
12. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	18
ՀԱՎԵԼՎԱԾ 1	20

1. ՆՊԱՏԱԿ

Ազդարարման քաղաքականության (այսուհետև՝ «Քաղաքականություն») նպատակն է ներդնել հստակ, խորհրդապահական և հուսալի մեխանիզմներ՝ իրական կամ ենթադրյալ խարդախության, վարքագծի կանոնների խախտումների, չարաշահումների, ինչպես նաև գործող օրենքների, կանոնակարգերի կամ Ընկերության քաղաքականությունների այլ խախտումների վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելու համար: Սույն Քաղաքականությունը հաստատում է «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ-ի (այսուհետև նաև «Ընկերություն») անշեղ հանձնառությունը՝ բարեվարքության, հաշվետվողականության և էթիկայի կանոնների պահպանման ուղղությամբ՝ ցուցաբերելով զրո հանդուրժողականություն իրավախախտումների նկատմամբ և նպաստելով բարեվարքության, թափանցիկության և հաշվետվողականության մշակույթի հաստատմանը:

Սույն Քաղաքականության կիրառմամբ, Ընկերությունը նպատակ ունի՝

- Խրախուսել անձանց հնարավորինս արագ հաղորդել կասկածելի խախտումների մասին՝ վստահ լինելով, որ հաղորդումները կարժանան պատշաճ ուշադրության, կուսումնասիրվեն սահմանված կարգով, և կապահովեն դրանց վերաբերյալ գաղտնիությունը:
- Վստահեցնել բարեխղճորեն և հիմնավորված կերպով հաղորդում ներկայացրած անձանց, որ նրանց կապշտպանեն հնարավոր ցանկացած ձևի խտրականությունից, ոտնձգությունից, հետապնդումից կամ այլ բացասական գործողություններից:
- Հավաստիացնել, որ բոլոր հաղորդումները կքննվեն համակողմանի, արդար և անաչառ ձևով:
- Խթանել թափանցիկության, հաշվետվողականության մշակույթի և էթիկական վարքագծի հաստատմանը Ընկերության բոլոր գործառույթներում:
- Անձնակազմին տրամադրել իրենց մտահոգությունները բարձրաձայնելու վերաբերյալ ուղեցույց:

Սույն Քաղաքականությունը կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներառյալ՝ «Ազդարարման համակարգի մասին», «Անձնական տվյալների պաշտպանության» մասին Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն, և չպետք է հակասի «Ֆրիդոմ Հոլդինգ Կորպորացիա»-ի Ազդարարման քաղաքականությանը, ինչպես նաև դրա հիմքում ընկած միջազգային իրավական ակտերին, այդ թվում՝ ԱՄՆ-ի

«Օտարերկրյա կոռուպցիոն գործողությունների մասին» (FCPA) և Սարբեյնս-Օքսլիի ակտերին (SOX):

Ընկերությունը պարտավոր է ոչ միայն համապատասխանել «Ֆրիդոմ Հոլդինգ Կորպորացիա»-ի Ազդարարման քաղաքականությանը, այլև չհակասել «Կանոնակարգային և իրավական խախտումների պարտադիր տեղեկացման և արտաքին իրավական խորհրդատուի ներգրավման քաղաքականության» դրույթներին: Ընկերությունում համապատասխանության և հետևողականության ապահովման նպատակով, կանոնակարգի կամ իրավական այլ խախտումների վերաբերյալ ցանկացած մտահոգություն կամ բողոք պետք է ներկայացվի երկու քաղաքականություններում սահմանված ընթացակարգերին համապատասխան:

Հասկացություններ.

Հասկացություն	Բովանդակություն
Ազդարարում	Կազմակերպությունում կատարված ապօրինության մասին հաղորդման ներկայացում՝ տեղեկություն տրամադրելով ոչ իրավաչափ արարքների, այդ թվում խարդախության և կոռուպցիայի կամ հանրային շահերին սպառնացող այլ արարքների վերաբերյալ:
Ազդարար(ներ)	Սույն Քաղաքականության համաձայն սահմանված եղանակներով հաղորդում ներկայացրած յուրաքանչյուր անձ՝ ներառյալ Ընկերության աշխատակիցներ, պաշտոնյաներ, տնօրեններ, կապալառուներ, մատակարարներ կամ այլ երրորդ անձինք: Ազդարարը պետք է գործի բարեխղճորեն՝ ունենալով անկեղծ համոզմունք, որ տվյալ արարքը կամ վարքագիծը, որի վերաբերյալ հաղորդում է ներկայացվել, անօրինական է, էթիկայի կանոնի խախտում, խարդախություն, խտրականություն կամ այլ կերպ համարվում է Ընկերության քաղաքականության կամ գործող օրենսդրության խախտում:
Հաշվեհարդար	Բարեխղճորեն հաղորդում ներկայացրած կամ պաշտպանության ենթակա գործողություններին

	մասնակցած անձի նկատմամբ գործադրվող բացասական վերաբերմունք: Դրանք դրսևորվում են աշխատանքից ազատման, պաշտոնի իջեցման կամ կասեցման, սպառնալիքի, հետապնդման, խտրական կամ այլ տեսակի բացասական վերաբերմունքով:
Խտրականություն	Գործողություններ, որոնք անօրինական խտրականություն են պարունակում անձի նկատմամբ՝ պաշտպանվող բնութագրիչ հատկանիշների համար (օրինակ՝ ռասա, սեռ, տարիք):
Հետապնդում	Վարքագիծ, որը ստեղծում է թշնամական, վախեցնող կամ վիրավորական աշխատանքային միջավայր:
Ոչ պատշաճ վարքագիծ	Օրենքների, կանոնակարգերի կամ ներքին քաղաքականությունների խախտում, այդ թվում խարդախություն, կոռուպցիա, լիազորությունների չարաշահում կամ էթիկայի նորմերի խախտում:
Խարդախություն	Դիտավորյալ գործողություն կամ անգործություն, որը միտված է անձին մոլորեցնելու կամ խաբելու՝ Ընկերությանը կամ շահառուներին պատճառելով ֆինանսական կամ վարկանիշային վնաս:
Բարեխղճորեն հաղորդել	Կասկածելի ոչ պատշաճ վարքագծի վերաբերյալ հաղորդման ներկայացում կամ բարձրաձայնում՝ անկեղծ համոզմամբ, որ ներկայացված տեղեկատվությունը ճիշտ է և վերաբերելի, եթե նույնիսկ այն հետագայում համարվում է չիմնավորված: Տվյալ անձի յուրաքանչյուր արարք համարվում է բարեխղճորեն կատարված, քանի դեռ հակառակը չի ապացուցվել:
Անձնական կամ սովորական աշխատանքային բողոք	Աշխատակցի՝ ներկայիս կամ նախկին աշխատանքային հարաբերությունների առնչվող դժգոհություն, որն ունի (կամ կարող է ունենալ) տվյալ անձի համար անձնական հետևանքներ և չի պարունակում ազդեցություն Ընկերության համար:

Գաղտնիություն	Հաղորդում ներկայացրած կամ քննությանը մասնակցած անձանց ինքնության և անձնական տվյալների պաշտպանություն, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց բացահայտումը պահանջվում է օրենքով կամ անհրաժեշտ է գործի լուծման համար:
Բարձր ղեկավարություն	Անձինք, ովքեր զբաղեցնում են Ընկերությունում տնօրենի, փոխնախագահի, կամ դրանց համարժեք պաշտոններ և պատասխանատու են հիմնական գործառույթների, բաժինների կամ ստորաբաժանումների ղեկավարման համար:
Համապատասխանության ղեկարարման և համապատասխանության թիմ	Ընկերությունում հատուկ նշանակված թիմ, որը պատասխանատու է սույն Քաղաքականության իրականացման և վերահսկման գործընթացի համար: Համապատասխանության թիմը հանձնառու է կատարել հաղորդումների ուսումնասիրություն, համապատասխանության գործառույթի շրջանակում նշանակված քննող թիմի միջոցով իրականացնել քննություն՝ ապահովելով արդար և թափանցիկ քննության գործընթաց, համապատասխանելով գործող օրենքներին, ինչպես նաև առաջարկելով համապատասխան ուղղիչ միջոցառումներ:
Նշանակված պատասխանատու	Գործատուի կողմից նշանակված անձ կամ քննող խումբ՝ հաղորդման քննությունն իրականացնելու համար:

Սույն Քաղաքականությունում սահմանված հասկացությունները կիրառվում և մեկնաբանվում են Ընկերության շրջանակում և կարող են տարբերվել Ընկերության գործունեության վայրի իրավազորությունում կիրառելի միջազգային կամ տեղական օրենքներով նախատեսված սահմանումներից: Սույն Քաղաքականության և համապատասխան իրավազորությունում կիրառելի օրենքների կամ կանոնակարգերի

սահմանումների միջև հակասության դեպքում, իրավական ակտերի սահմանված կարգավորումները գերակա են և սույն Քաղաքականությունը պետք է մեկնաբանվի կիրառվող իրավական դրույթներին համապատասխան:

2. ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Սույն Քաղաքականությունը կիրառվում է բոլոր աշխատակիցների, տնօրենների, պաշտոնյանների, ինչպես նաև համապատասխան երրորդ կողմերի նկատմամբ, ներառյալ՝ Ընկերության հաճախորդների, կապալառուների, մատակարարների և բիզնես գործընկերների: Քաղաքականությունը տարածվում է հետևյալ հաղորդումների վրա.

- Ընկերության էթիկայի կանոնագրքի, քաղաքականությունների կամ ընթացակարգերի խախտումներ:
- Հաշվապահական հաշվառման, ներքին վերահսկողության, ֆինանսական հաշվետվությունների հետ կապված խախտումներ կամ խարդախություններ:
- Գործող օրենքների, կանոնակարգերի կամ միջազգային չափանիշների, այդ թվում՝ կաշառակերության և կոռուպցիայի կանխարգելման, պատժամիջոցների կիրառման և անձնական տվյալների պաշտպանության կանոնակարգերի խախտումներ:
- Բարեխղճորեն հաղորդում ներկայացրած կամ քննությանը մասնակցած անձանց նկատմամբ հաշվեհարդարի, հոգեբանական ճնշման (բուլլինգի), խտրականության կամ հետապնդման դրսևորումներ:

Բացառություններ. Սույն Քաղաքականությունը չի տարածվում անձնական բնույթի դժգոհությունների, մասնավորապես փոխհատուցման վերաբերյալ վեճերի կամ աշխատավայրում ծագած հակասությունների վրա, եթե վերջիններս չեն պարունակում գործող օրենքների, Ընկերության քաղաքականությունների, էթիկական նորմերի խախտումներ կամ սույն Քաղաքականության կարգավորման առարկա հանդիսացող այլ հարցեր: Նմանօրինակ հարցերը պետք է լուծվեն Ընկերության անձնակազմի կառավարման քաղաքականությունների և ընթացակարգերի շրջանակում: Աշխատակիցները պարտավոր են հետևել հաղորդման ներկայացման և լուծման համար սահմանված քննության մեխանիզմներին: Թեև Ընկերությունը հանձնառու է ապահովել արդար և հավասար մոտեցում բոլոր բողոքների նկատմամբ, այնուամենայնիվ, անձնական բնույթի դժգոհությունները, որոնք չեն առնչվում սույն Քաղաքականությամբ կարգավորվող

իրավական կամ քաղաքականության հետ կապված խախտումներին, չեն դիտարկվում սույն Քաղաքականության շրջանակում և ենթակա են քննության առանձին՝ Ընկերության անձնակազմի կառավարման քաղաքականությունների և ընթացակարգերի համաձայն:

3. ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

«Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ընկերությունը պարտավոր է իր գործունեությունն իրականացնել բարեվարքության բարձր չափանիշներին համապատասխան՝ խթանելով թափանցիկության, հաշվետվողականության և էթիկական վարքագծի մշակույթի ամրապնդմանը: Սույն Քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

- 1. Գաղտնիություն և պաշտպանություն.** Ընկերությունը երաշխավորում է, որ բոլոր հաղորդումները կքննվեն առավելագույն գաղտնիությամբ՝ օրենքի թույլատրելի սահմաններում պաշտպանելով հաղորդում ներկայացրած անձանց ինքնությունը: Ընկերությունը անթույլատրելի է համարում ցանկացած ձևի հաշվեհարդար՝ ամբողջությամբ պաշտպանելով բարեխղճորեն հաղորդում ներկայացրած կամ քննությանը մասնակցած անձանց ցանկացած հաշվեհարդարից, խտրականությունից կամ հետապնդումից:
- 2. Ժամանակին և անաչառ քննություն.** Ընկերությունը հանձնառու է իրականացնել ժամանակին, համակողմանի և անաչառ քննություն՝ ապահովելով որպեսզի յուրաքանչյուր հաղորդում քննվի և լուծվի օբյեկտիվորեն՝ որակավորված մասնագետների կողմից՝ երաշխավորելով ողջ գործընթացում արդարության ու բարեվարքության սկզբունքների պահպանումը: Միևնույն ժամանակ, կարևորվում են հաղորդումների բարեխիղճ ներկայացնելու սկզբունքը. այսինքն՝ հաղորդումները պետք է ներկայացվեն ազնվորեն, նույնիսկ եթե դրանք հետագայում համարվում են անհիմն և նման դեպքերում ազդարարների նկատմամբ որևէ ներգործության միջոց չի կարող կիրառվել: Դիտավորյալ կեղծ կամ չարամտորեն ներկայացված մեղադրանքները չեն հանդուրժվում, և կարող են հանգեցնել կարգապահական պատասխանատվության կամ օրենքով սահմանված այլ խիստ հետևանքների:
- 3. Հաշվետվողականություն և ուղղիչ գործողություններ.** Ընկերությունը գործում է հաշվետվողականության սկզբունքով: Բոլոր հիմնավորված հաղորդումների հիման վրա կձեռնարկվեն համապատասխան ուղղիչ գործողություններ՝ ապահովելով, որ էթիկական վարքագիծը լինի տվյալ գործունեության անկյունաքարը:

4. Ոչ խտրական միջավայր. Ընկերությունը հանձնառու է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ սույն Քաղաքականությամբ նշված բոլոր անձինք կարող են ազատորեն ներկայացնել հաղորդումներ՝ առանց հաշվեհարդարի, խտրականության կամ հետապնդման ենթարկվելու մտավախության:

5. Շարունակական բարելավում. Սույն Քաղաքականությունը հանդիսանում է Ընկերության կառավարման և էթիկական չափանիշների շարունակական բարելավմանն ուղղված համընդհանուր հանձնառության մի մաս: Ընկերությունը պարբերաբար կվերանայի և կթարմացնի սույն Քաղաքականությունը՝ գործադրելով ողջամիտ ջանքեր, ապահովելով դրա արդիականությունը, արդյունավետությունը և գործող կանոնակարգերի պահանջներին ու լավագույն փորձին համապատասխանությունը:

Հետևելով այդ սկզբունքներին՝ Ընկերությունը նպատակ ունի ձևավորել միջավայր, որտեղ բարելավարժությունն ու հարգանքը կդրվի բոլոր գործողությունների հիմքում՝ ապահովելով, որպեսզի յուրաքանչյուր անձ հնարավորություն ունենա հաղորդում ներկայացնել առանց որևէ մտավախության, և այնպիսի վստահությամբ, որ բոլոր հարցերը կլուծվեն ժամանակին, պատշաճ և պրոֆեսիոնալ:

4. ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Հաղորդումներն անվտանգ, ժամանակին և առանց հաշվեհարդարի ենթարկվելու մտավախության ներկայացնելու համար, Ընկերությունն տրամադրում է հաղորդում ներկայացնելու համապատասխան և հուսալի մի շարք ուղիներ: Այդ ուղիները հասանելի են շուրջօրյա՝ 24/7 ռեժիմով, գաղտնի են և ունեն անանուն հաղորդումներ ներկայացնելու հնարավորություն, բացառությամբ գործող օրենսդրությամբ սահմանված տվյալների բացահայտման դեպքերի:

Հաղորդման ուղիներ. Աշխատակիցները, պաշտոնյանները, տնօրենները, կապալառուները, մատակարարները, բիզնես գործընկերները և այլ շահառուներ կարող են իրենց հաղորդումները ներկայացնել հետևյալ եղանակներով.

ա. Համապատասխանության թեժ գիծ. Թեժ գիծը գործում է շուրջօրյա՝ 24/7 ռեժիմով, և ապահովում է մեր բազմալեզու միջազգային թիմերի հետ կապի հաստատում: Անվճար հեռախոսահամարներն ու կոնտանկտային անձի տվյալները ներկայացված են սույն Քաղաքականության Հավելված 1-ում:

բ. Առցանց հաղորդման հարթակ. Ընկերությունը ներդրել է անկախ ծառայություն մատուցողի կողմից սպասարկվող՝ հաղորդումներ ներկայացնելու անվտանգ և գործընկերային բնույթի հարթակ: Հարթակը թույլ է տալիս ներկայացնել անանուն հաղորդումներ: Հարթակի նկատմամբ հասանելիության մուտքի մանրամասները ներկայացված են սույն Քաղաքականության Հավելված 1-ում:

գ. Էլեկտրոնային փոստի միջոցով հաղորդման ներկայացում. Սույն Քաղաքականության դրույթների մեկնաբանության և կիրառման վերաբերյալ խորհրդատվություն պահանջող ընդհանուր բնույթի համապատասխանության հարցումները կարող են նաև ուղարկվել Ընկերության համապատասխանության էլ. փոստի հասցեին՝ compliance.requests@ffin.am.

դ. Ֆրիդոմ Հոլդինգ Կորպորացիայի համապատասխանության ուղիներ. Եթե խախտումը կամ ոչ պատշաճ վարքագիծն առնչվում է Ընկերության Բարձր ղեկավարությանը, կամ Համապատասխանության բաժնի ղեկավարին կամ խախտումները վերաբերում են տարբեր իրավազորություններին, ապա խստորեն հորդորում ենք հաղորդումը ներկայացնել անմիջապես Ֆրիդոմ Հոլդինգ Կորպորացիային՝ նշյալ հաղորդման ուղիներով:

Անանուն հաղորդումներ. Ընկերությունը ճանաչում է անանունության կարևորությունը որպես անվտանգ կերպով հաղորդում ներկայացնելու խթանող գործոն:

Հաղորդում ներկայացնող անձինք կարող են որոշել մնալ անանուն՝ ազդարարման համապատասխանության թեժ գծի, առցանց հաղորդման հարթակի կամ էլ. փոստի միջոցով հաղորդումներ ներկայացնելիս:

Ընկերությունը կձեռնարկի բոլոր ողջամիտ միջոցները՝ հաղորդում ներկայացնողի ինքնությունը պաշտպանելու համար: Այնուամենայնիվ, անանունությունը կարող է զգալիորեն բարդացնել կամ երբեմն անհնարին դարձնել լիարժեք քննության իրականացումը: Անանուն բողոքներն ուսումնասիրվում են՝ ելնելով դրանց հիմնավորվածության աստիճանից և նկարագրված ապօրինի գործողությունները նույնականացնելու հնարավորությունից:

Ընկերությունը պարտավոր է պաշտպանել ազդարարի անանունությունը և ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են բացահայտել նրա ինքնությունը: Անշուշտ, ազդարարի ինքնության բացահայտումը կարող է պահանջվել դատարանի որոշմամբ կամ իրավական ընթացակարգով՝ գործի քննության շրջանակում: Գործում ներգրավված յուրաքանչյուր այլ անձանց անանունությունը վերոնշյալ սահմանափակումների համաձայն նույնպես ենթակա է պաշտպանության:

Անձնական տվյալների պաշտպանությունը և մշակումն իրականացվում է անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ գործող օրենսդրության համաձայն:

Հասանելիություն. Հաղորդման ներկայացման բոլոր ուղիները հասանելի են 24/7 ռեժիմով: Առցանց հարթակը և ազդարարման թեժ գիծն ապահովում է բազմալեզու աջակցություն՝ ստեղծելով Ընկերության համար գլոբալ գործունեության շրջանակներում հասանելիություն: Հաղորդման ներկայացման ուղիներն անվճար են բոլոր օգտատերերի համար:

Բարեխղճորեն հաղորդման ներկայացում. Ընկերությունը խրախուսում է, որ անձինք ազնիվ և բարեխղճորեն ներկայացնեն իրենց հաղորդումները, նույնիսկ, եթե հետագայում պարզվում է, որ կասկածներն անհիմն են: Չարամիտ կամ դիտավորյալ մոլորեցնելու նպատակով ներկայացված հաղորդումները կարող են հանգեցնել կարգապահական պատասխանատվության կամ գործող օրենքների համաձայն՝ այլ խիստ հետևանքների:

Հաղորդում ներկայացնելու հավելյալ եղանակներ. Սույն Քաղաքականությունը չի սահմանափակում, որ աշխատակիցները կամ շահառուները իրենց հաղորդումներն ուղիղ ներկայացնեն կարգավորող մարմիններին, իրավապահ կամ պետական մարմիններին, եթե գոյություն ունեն հիմնավոր կասկածներ գործող օրենսդրության խախտման վերաբերյալ: Այդուհանդերձ, Ընկերությունը հորդորում է, որ անձինք, հնարավորության դեպքում, փորձեն խնդիրները լուծել սույն Քաղաքականությամբ սահմանված ներքին հաղորդման ընթացակարգերով, նախքան դրանք արտաքին մարմիններին փոխանցելը:

Ազդարարներին խորհուրդ է տրվում մինչև արտաքին մարմիններին հաղորդում ներկայացնելը, դիմել անկախ իրավաբանական խորհրդատվության՝ գործընթացը լիարժեք հասկանալու և իրենց իրավունքները գործող օրենքներով պաշտպանելու համար: Սույն առաջարկությունը նպատակ ունի նպաստել հիմնավոր որոշումների կայացմանը և որևէ կերպ չի սահմանափակում ազդարարների՝ անմիջապես կարգավորող մարմիններին կամ իրավապահ կառույցներին հաղորդում ներկայացնելու իրավունքը:

5. ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հաղորդում ներկայացնելու գործընթացն ապահովում է, որպեսզի սույն Քաղաքականության շրջանակներում ներկայացված բոլոր մտահոգությունները լուծվեն արագ, արդարացի և գործող օրենքներին ու Ընկերության չափորոշիչներին համապատասխան: Գործընթացը ներառում է հետևյալ փուլերը՝

1. Ստացման հաստատում.

- Երբ Ազդարարը տրամադրում է իր տվյալները, հաղորդման ստացումը հաստատվում է և հաղորդում ներկայացնող անձին տրամադրվում է նախնական պատասխան:

- Ստացման հաստատումն ուղարկվում է հաղորդումը ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում:

- Ստացման հաստատումը ներառում է տեղեկություն՝ բողոքի ստանալու փաստի, գործի ընթացքին հետևելու համար մեկանգամյա օգտագործման կոդի, հաղորդումը պատշաճ և գաղտնիության պահպանմամբ ուսումնասիրելու հավաստման, ինչպես նաև քննության գործընթացի ընդհանուր ժամկետների մասին:

2. Նախնական գնահատում.

- Հաղորդման հիմնավորվածությունը և ծանրությունը գնահատվում է՝ հետագա քայլերը որոշելու համար:

- Նախնական գնահատումն իրականացվում է հաղորդումը ստանալուց 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Նախնական գնահատման ընթացքում Համապատասխանության թիմը նախ ստուգում է արդյոք հաղորդումը գտնվում է սույն Քաղաքականության կարգավորման շրջանակում և եթե այո, ապա գործը քննելու համար նշանակվում է պատասխանատու քննող մասնագետ կամ քննող խումբ: Եթե հաղորդումը չի գտնվում սույն Քաղաքականության կարգավորման շրջանակում, հաղորդում ներկայացրած անձը ծանուցվում է, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ուղղորդվում՝ նման դեպքերի համար այլ համապատասխան եղանակով կամ քաղաքականությամբ դիմելու համար: Համապատասխանության թիմը նաև գնահատում է արդյոք անհրաժեշտ են անհետաձգելի միջոցներ ձեռնարկել՝ հնարավոր իրավական պարտավորությունները կատարելու կամ դիսկերը մեղմելու նպատակով: Եթե հաղորդումը

պարունակում է զգալի ռիսկ կամ վերաբերում է բարձրաստիճան աշխատակիցներին կամ այլ զգայուն հարցերին, ապա Հոլդինգի համապատասխանության ղեկավարը կամ Ընկերության բարձր ղեկավարությունն անհապաղ տեղեկացվում են՝ պատշաճ վերահսկողություն իրականացնելու համար:

3. Քննություն.

- Հաղորդման վերաբերյալ մանրամասն, անաչառ և ժամանակին քննության անցկացում:
- Քննության գործընթացը սովորաբար ավարտվում է 60 աշխատանքային օրվա ընթացքում՝ կախված ապացույցների առկայությունից և բարդությունից:

- Այն դեպքերում, երբ գործի քննության հանգամանքների ուսումնասիրության համար անհրաժեշտ է լրացուցիչ ժամանակ, Հոլդինգի համապատասխանության ղեկավարը կամ Ընկերության գործադիր տնօրենը (կամ նրանց կողմից նշանակված անձինք) կարող են թույլատրել ժամկետի երկարաձգում՝ ապահովելով, որ գործը լուծվի պատշաճ և լիարժեք կերպով:

Քննությունը գործընթացը կարող է ներառել հետևյալ քայլերը՝

- Բոլոր համապատասխան փաստաթղթերի, տեղեկությունների, տվյալների և այլ ապացույցների հավաքագրում՝ հաղորդումը լիարժեք ուսումնասիրելու համար:
- Ներգրավված կողմերի և վկաների հետ հարցազրույցների անցկացում՝ ապահովելով նրանց գաղտնիությունը և անհրաժեշտության դեպքում պաշտպանելով նրանց ինքնությունը:
- Հավաքված ապացույցների վերլուծություն՝ հաղորդման հիմնավորվածությունը հաստատելու կամ հերքելու համար:
- Վերլուծել հավաքագրված ապացույցները՝ ներկայացված մտահոգությունը հաստատելու կամ հերքելու նպատակով:
- Գործի քննության ընթացքում ձեռնարկված բոլոր գործողությունների և ընդունված որոշումների վերաբերյալ մանրամասն և ճշգրիտ արձանագրությունների կազմում և պահպանում՝ թափանցիկությունը և հաշվետվողականությունն ապահովելու համար:

Քննության գործընթացը կարող է ներառել նաև այլ անհրաժեշտ գործողություններ: Ներկայացված հաղորդման բնույթից և բարդությունից կախված կարող են կիրառվել լրացուցիչ միջոցներ կամ ընթացակարգեր՝ հարցը լիարժեքորեն, արդարացիորեն և համակողմանիորեն ուսումնասիրելու և լուծելու համար:

4. Արդյունքներ և լուծում.

- Ապահովել, որ ձեռնարկվեն համապատասխան ուղղիչ գործողություններ և հնարավորության դեպքում այդ մասին տեղեկացնել հաղորդում ներկայացրած անձին:
- Քննության արդյունքի, ինչպես նաև ձեռնարկված գործողությունների վերաբերյալ տեղեկատվությունը գործի քննության ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կփոխանցվի համապատասխան կողմերին:

5. Բողոքարկում.

Եթե հաղորդում ներկայացրած անձը կարծում է, որ իր հաղորդումը պատշաճ կերպով չի լուծվել, ապա կարող է այդ հարցը փոխանցել Հոլդինգի համապատասխանության ղեկավարին՝ լրացուցիչ վերանայման համար:

Բողոքարկման համար անձը պետք է գրավոր դիմի Համապատասխանության բաժնին՝ հստակ նշելով իր մտահոգությունը, այն պատճառները, թե ինչու է համարում, որ հարցը պատշաճ ձևով չի լուծվել, և ցանկացած այլ լրացուցիչ հիմնավորող տեղեկատվություն: Համապատասխանության բաժինը դիմումը կփոխանցի Հոլդինգի համապատասխանության ղեկավարին՝ անկախ ուսումնասիրության համար, և բողոքի քննության ընթացքի ու արդյունքների մասին կտեղեկացնի բողոք ներկայացրած անձին:

Այն դեպքերում, երբ բողոքը վերաբերում է համապատասխանության բաժնին, բողոքն կարող է ուղղվել անմիջապես Հոլդինգի համապատասխանության ղեկավարին՝ հետևյալ էլ. փոստի հասցեով: compliancehotline@frhc.group.

Բոլոր բարձր դիսկ պարունակող ազդարարման դեպքերը, այդ թվում՝ բարձր ղեկավարության դեմ բողոքները, զգալի ֆինանսական կամ հեղինակային դիսկ պարունակող, կամ հնարավոր իրավախախտումների հետ կապված դեպքերը պետք է փոխանցվեն Հոլդինգի համապատասխանության ղեկավարին՝ Ընկերության ներքին կառավարման ընթացակարգերին համապատասխան:

Բողոքները պետք է ներկայացվեն նախնական քննության արդյունքը ստանալուց 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հաղորդումը վերադասության կարգով բողոքարկելիս, այն պետք է անկախ ձևով քննվի՝ թափանցիկությունն ու արդարությունն ապահովելու նպատակով: Գործի բարդությունից կախված, բողոքի վերանայման գործընթացը, որպես կանոն, ավարտվում է 20 աշխատանքային օրվա ընթացքում:

Կաշառակերության և կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության հնարավոր խախտումների, ինչպիսիք են կաշառքի, շահերի բախման կամ անթույլատրելի նվերների վերաբերյալ հաղորդումները նույնպես պետք է դիտարկվեն «Կաշառակերության և կոռուպցիայի դեմ պայքարի մասին» քաղաքականության դրույթներին համապատասխան՝ լիարժեք համապատասխանությունը և պատշաճ լուծումն ապահովելու համար:

6. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԻՑ

«Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ընկերությունը խստորեն արգելում և չի հանդուրժի որևէ տեսակի հաշվեհարդարի վերաբերմունք այն անձանց նկատմամբ, ովքեր բարեխղճորեն ներկայացրել են հաղորդում կամ համագործակցել են հաղորդման քննության գործընթացում: Հաշվեհարդարը համարվում է սույն Քաղաքականության խախտում, որը կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության, ընդհուպ մինչև աշխատանքային հարաբերությունների կամ Ընկերության կամ նրա ներկայացուցիչների հետ այլ համագործակցության դադարեցման:

Անձինք, ովքեր գտնում են, որ ենթարկվել են հաշվեհարդարի՝ հաղորդում ներկայացնելու կամ քննությանը մասնակցելու համար, հորդորվում է հնարավորինս արագ այդ մասին հայտնել: Հաղորդումները, որպես կանոն, պետք է ներկայացվեն հաշվեհարդարի գործողությունից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հաշվեհարդարի վերաբերյալ հաղորդումները կարող են ներկայացվել հետևյալ եղանակներով.

- Անմիջապես Հոլդինգի համապատասխանության ղեկավարին՝ հատուկ էլեկտրոնային հասցեով retaliation@frhc.com.
- Ընկերության համապատասխանության թեժ գծի կամ առցանց հաղորդման հարթակի միջոցով:

Հաղորդումը պետք է ներառի հնարավորինս մանրամասն այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են ներգրավված անձանց, վկաների անունները և հաշվեհարդարի գործողության կոնկրետ օրինակները:

Հաշվեհարդարի վերաբերյալ բոլոր հաղորդումները կընդունվեն, անհապաղ կստուգվեն և կքննվեն սույն Քաղաքականության սահմանված ընթացակարգերին համապատասխան:

Ղեկավարները և մենեջերները, ովքեր նկատում են կամ տեղեկացված են հաշվերհարդարի գործողության մասին, պարտավոր են այն հաղորդել Հոլդինգի համապատասխանության ղեկավարին կամ Ընկերության համապատասխանության թեժ գծին: Նման վարքագծի վերաբերյալ չհայտնելը կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության կամ գործող օրենսդրությամբ սահմանված այլ հետևանքների:

7. ԴԵՐԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Քաղաքականության արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով սահմանվում են հետևյալ հիմնական դերերն ու պարտականությունները.

Աշխատակիցները պարտավոր են գործել Ընկերության արժեքներին համահունչ՝ ժամանակին ներկայացնելով հաղորդում չարաշահման, ոչ էթիկական վարքագծի կամ օրենքների, կանոնակարգերի կամ Ընկերության քաղաքականությունների խախտումների վերաբերյալ: Հաղորդումները պետք է ներկայացվեն բարեխղճորեն՝ ներառելով ճշգրիտ և ազնիվ տեղեկատվություն՝ համապատասխան գործողությունների ձեռնարկմանը նպաստելու համար:

Ղեկավարներն ու մենեջերները առանցքային դեր ունեն բարեվարքության և թափանցիկության մշակույթի ձևավորման հարցում: Նրանք պատասխանատու են.

- Խրախուսել բաց հաղորդակցումը և աջակցել այն աշխատակիցներին, ովքեր ցանկանում են հաղորդում ներկայացնել:

- Ներկայացրած հաղորդումները համապատասխան ուղիներով ժամանակին և պատշաճ ձևով փոխանցել:

- Օրինակ ծառայել այլոց համար՝ հետևելով սույն Քաղաքականության սահմանված սկզբունքներին:

Համապատասխանության և քննության թիմերը լիազորված են՝

- Իրականացնել հաղորդումների ամբողջական, անաչառ և ժամանակին քննություն:

- Պահպանել խիստ գաղտնիություն՝ ներգրավված անձանց ինքնությունը պաշտպանելու համար՝ գործող օրենսդրության և Ընկերության քաղաքականությունների համաձայն:

- Ապահովել, որ քննության գործընթացն իրականացվի բարեվարքության և մասնագիտական բարձր չափանիշներով:

Բարձր ղեկավարությունը և/կամ Տնօրենների Խորհուրդը կարևոր դեր ունեն սույն Քաղաքականության կիրառման և արդյունավետության վերահսկման գործում: Նրանց պարտականություն է հաստատել և նպաստել քաղաքականության ընդունմանը, հետևել դրա համապատասխանությանը՝ պարբերաբար վերանայումների միջոցով (ներառյալ ներքին աուդիտի և համապատասխանության գնահատումների), ինչպես նաև ապահովել, որպեսզի հաստատված խախտմանն ի պատասխան ձեռնարկվեն համապատասխան ուղղիչ գործողություններ:

Գործընկերներն ու մատակարարները պարտավոր են հետևել Ընկերության էթիկայի և գործարար վարքագծի կանոնագրքին, ինչպես նաև սույն Քաղաքականության դրույթներին: Նրանք պարտավոր են հաղորդել ցանկացած ենթադրյալ խախտման կամ ոչ էթիկական գործելակերպի մասին՝ սահմանված հաղորդման ուղիներով: Տվյալ կանոններին չհետևելը կամ խախտումների մասին չհաղորդելը կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության, գործարար հարաբերությունների դադարեցման կամ գործող օրենքներով սահմանված այլ համապատասխան գործողությունների:

8. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ընկերությունը պարտավոր է պահպանել հաղորդման և գործի քննության ընթացքում հավաքագրված ողջ տեղեկատվության գաղտնիությունը: Հաղորդումներն ու դրանց հետ կապված փաստաթղթերը կմշակվեն առավելագույն զգուշությամբ՝ երաշխավորելով, որ զգայուն տվյալները հասանելի լինեն միայն այն անձանց ովքեր ունեն այդ տեղեկությունները ստանալու օրինական անհրաժեշտություն և անմիջականորեն ներգրավված են հաղորդման լուծման գործընթացում:

Տվյալների պաշտպանության մասին գործող օրենսդրության, այդ թվում՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին և համապատասխան գործող կանոնակարգերին համապատասխանելու համար, Ընկերությունը ապահովում է, որ՝

- Տվյալներն անվտանգ ձևով պահվեն տեխնիկապես և անվտանգության պահանջներին համապատասխան սերվերների վրա:

- Պահվող տվյալների հասանելիությունը խստորեն վերահսկվի և հասանելի լինի միայն լիազորված անձնակազմին:

- Հաղորդումների կամ քննությունների շրջանակում ստացված անձնական տվյալները վերամշակվեն բացառապես միայն հաղորդումների լուծման և Ընկերության

Քաղաքականությունների պահպանման ու իրավական պարտավորությունների կատարման նպատակով:

Սույն չափանիշներին հետևելով՝ Ընկերությունը նպատակ ունի պաշտպանել գործում ներգրավված բոլոր անձանց մասնավոր կյանքի գաղտնիությունը և պահպանել հաղորդման գործընթացի ամբողջականությունը:

9. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ

Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ընկերությունը հանձնառու է ապահովել, որպեսզի բոլոր աշխատակիցները և համապատասխան երրորդ կողմերը հասկանան և հետևեն սույն Քաղաքականության սկզբունքներին և գործընթացներին: Այդ նպատակով՝

- Բոլոր նոր աշխատակիցները պարտավոր են անցնել համապատասխանության վերաբերյալ ուսուցում՝ աշխատանքի ընդունվելիս սույն Քաղաքականության պահանջների համաձայն:

- Բոլոր աշխատակիցները պետք է մասնակցեն տարեկան պարտադիր ուսուցումներին՝ Քաղաքականության և կատարված փոփոխությունների վերաբերյալ իրենց գիտելիքներն ամրապնդելու համար:

Քաղաքականությունը հասանելի է Ընկերության ներքին ցանցում և տրամադրվում է բոլոր նոր աշխատակիցներին աշխատանքի ընդունվելիս: Սույն Քաղաքականության վերաբերյալ պարբերաբար հիշեցումներն ու թարմացումները հաղորդվում են ներքին հայտարարությունների և ուսուցումների միջոցով:

Իրականացնելով այդ միջոցառումներն՝ Ընկերությունն ապահովում է, որ աշխատակիցները և համապատասխան երրորդ կողմերը լինեն իրազեկված, լիազորված և հավատարիմ Ընկերության՝ էթիկական վարքագծի և թափանցիկության ապահովման ուղղությամբ ստանձնած հանձնառությանը:

10. ԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

«Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» Ընկերությունը պարտավորվում է ապահովել սույն Քաղաքականության արդիականությունն ու արդյունավետությունը՝ պարբերաբար անցկացվող դիտարկումների և վերանայումների միջոցով: Այդ միջոցառումներն ուղղված են

ապահովել Քաղաքականության շարունակական համապատասխանությունը փոփոխվող կանոնակարգերին, գործարար սովորույթներին և ոլորտային չափանիշներին:

Քաղաքականությունը վերանայվում է առնվազն տարին մեկ անգամ կամ կանոնակարգերում, բիզնես գործունեությունում կամ ռիսկերում տեղի ունեցող էական փոփոխությունների դեպքերում: Փոփոխությունները իրականացվում են ըստ անհրաժեշտության՝ արդյունավետությունն ու համապատասխանությունը ապահովելու նպատակով:

11. ԴԻՏԱՆՑՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մանրամասն վարվում է գրանցամատյան՝ փաստաթղթավորելու համար.

- Ստացված հաղորդումների քանակը և տեսակները,
- Քննությունների ընթացքը, արդյունքներն և լուծումները,
- Միտումները կամ կրկնվող խնդիրները, որոնք կարող են պահանջել լայնածավալ ուղղիչ

միջոցառումներ:

Բարձր ղեկավարությանը և/կամ տնօրենների խորհրդին որպես համապատասխանության վերաբերյալ հաշվետվությունների մաս, պարբերաբար պատրաստվում և տրամադրվում են զեկույցներ, որում ամփոփվում են տեղեկություններ այդ թվում ստացված, ընթացիկ և փակված գործերի քանակի, ինչպես նաև բացահայտված միտումների և հիմնական դիտարկումների վերաբերյալ: Լրացուցիչ տեղեկություններ կարող են տրամադրվել ըստ պահանջի կամ անհապաղ ուշադրության արժանի կարևոր բացահայտումների դեպքում:

Ազդարարման մասին հաղորդումները և քննությունների հետ կապված բոլոր գրառումները պահպանվում են առնվազն յոթ տարի՝ գործող օրենքների և սույն Քաղաքականության համաձայն:

12. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն Քաղաքականությունն ուժի մեջ է մտնում 2025թ. սեպտեմբերի 1-ից և բոլոր աշխատակիցները, տնօրենները, պաշտոնյաները, կապալառուները, մատակարարները և մյուս շահագրգիռ կողմերը պարտավոր են հետևել դրա դրույթներին:

Սույն Քաղաքականության վերաբերյալ իրազեկումն իրականացվում է հետևյալ եղանակներով՝

- Աշխատակիցները, տնօրենները և պաշտոնյաները տեղեկացվում են աշխատանքային էլ. փոստի, ինչպես նաև համապատասխանության վերաբերյալ անցկացվող պարտադիր ուսուցումների միջոցով:
- Կապալառուները և մատակարարները տեղեկացվում են պայմանագրային փոփոխությունների կամ պաշտոնական գրավոր ծանուցումների միջոցով:

Ընկերության համապատասխանության բաժնի ղեկավարը հանդիսանում է սույն Քաղաքականության պաշտոնական պատասխանատուն: Համապատասխանության բաժնի ղեկավարը վերահսկում է սույն Քաղաքականության կիրառմանը, ապահովում ամրագրված սկզբունքների պահպանումը, ինչպես նաև պարբերաբար վերանայում է այն և, անհրաժեշտության դեպքում, կատարում համապատասխան փոփոխություններ՝ օրենքներում, կանոնակարգերում կամ գործարար սովորույթներում կատարված փոփոխություններն դրանում արտացոլելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ազդարարման թեժ գիծ (հասանելի է յուրաքանչյուր օր 24 ժամ)

Ֆրիդոմ Հոլդինգ, ԱՄՆ +1 951 309 2273

Հայաստան +374

Առցանց հաղորդման հարթակ

Անկախ անվտանգ հարթակ - <https://freedom-Armenia.whispli.com/lp/hotline?locale=en>

Էլ. փոստի հասցե: Հաղորդումները կարող են նաև ներկայացվել Ընկերության հետևյալ անվտանգ էլ. փոստի հասցեով compliance.requests@ffin.am.